Արձանագրության 3
Բժշկական սարքավորումների ձեռքբերման «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/168» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

18.05.2018թ.
Ժամը՝ 10:30

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Յու. Մամիկոնյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Բաղրամյան /գնահատող/, Լ. Հարությունյան /գնահատող/
Ա.Գասպարյան /բացող/, Մ.Աբրահամյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության մասին

(Յու. Մամիկոնյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց հարկային պարտավորություն, որը գերազանցում է մասնակցի ներկայացրած գնային առաջարկի /ըստ առանձին չափաբաժինների/ մեկ տոկոսը:

Ելնելով վերոգրյալից՝ գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել առաջին տեղ զբաղեցնող մասնակցի հայտը՝ համաձայն Կարգի 44-րդ կետի.

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

2. 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների մասին

(Յու. Մամիկոնյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետով ընդունված որոշումը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց ընթացակարգի 1-3-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «Դառես» ՍՊԸ-ին, 5-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «Յունիմեդ Հայ-Ռուսական ՀՁ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներին ծանուցելու մասին

(Յու. Մամիկոնյան)

3.1 Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

3.2 18.05.2018թ. ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել իրենց կողմից առաջարկվող ապրանքների /համապատասխան չափաբաժինների մասով/՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը՝ համաձայն հրավերի 6.1 հավելվածի:

Հրավերով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

4. Ընթացակարգը 4-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու մասին

(Յու. Մամիկոնյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետով ընդունված որոշումը և հաշվի առնելով, որ 4-րդ չափաբաժնի մասով հայտ է ներկայացրել միայն «Մեդտեխսերվիս» ՍՊԸ-ն՝ գնահատող հանձնաժողովը որոշեց ընթացակարգը 4-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած: Հաստատել չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

5. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Յու. Մամիկոնյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 6-րդ կետում նշված փաստաթղթերի ստացման հաջորդ աշխատանքային օրը, ժամը 10:30-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------- Յու. Մամիկոնյան

Անդամներ՝ ---------- Ա. Բաղրամյան

---------- Լ. Հարությունյան

---------- Ա.Գասպարյան

---------- Մ.Աբրահամյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան